ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՑ

ՀՐԱՆՏ ՀՐԱՀԱՆ

ԺՈՂՈՎՐԴԻ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Ովսիում խռնված մարդկային բազմության ալիքը տատանվում էր։ Ամեն ոք ուզում էր մոտենալ շոգենավին և մի անգամ ևս հրաժեշտ առնել իր սիրելի բարեկամներից, որոնք ներգաղթում էին դեպի իրենց Սովետական Հայրենիքը։

Բուլղարական և սովետական հիմները խանդավառ զգացումքներով լցրին թե՛ մեկնողների և թե՛ ուղարկողների սրտերը. դարեր անընդհատ շարունակվող կործանարար արտագաղթից հետո, Բուլղարիայից առաջին անգամ էր տեղի ունենում հայ ժողովրդի փրկարար ներգաղթը դեպի Հայրենիք։

Ահա թե ինչո՞ւ բոլորի սրտերը լցված են խանդավառ հուզմունքով և աչքերը՝ ուրախության արցունքներով։ Այդ պահին չեն խոսում։ Հուզումնալից դեմքերն ու նայվածքներն իրենց լռությամբ ավելի են պերճախոս։ Սև ծովի մյուս ափին Հայրենիքն սպասում է իր պանդուխտ զավակներին։

Վերջին շչակն է ու «ԿՐԻԼՅՈՆ»ի վիթխարի մարմինը շարժվում է դանդաղորեն։ Կարմիր դրոշակը ծածանվում է երկնքի ու ծովի կրկնակ կապույտների մեջ։ «Ուռա»ներն ու «կեցցե՞»ներն ողջունում են ազատության ու խաղաղության այդ սիմվոլը։

Ու ես շոգենավի կամրջակից լսում եմ ընկերների և հարազատների հրաժեշտի վերջին խոսքերը և նրանց ցանկությունն ու իղձը։

— Զմոռանա՛ս մեր հանձնարարությունը...

Ու «ԿՐԻԼՅՈՆ»ը բաժանվում է Բուրգազի ծովափից ու դեմքն ուղղում հայրենի հորիզոններին։ Անջրպետը հետզհետե լայնանում է մեր և մնացողների միջև։ Բայց դեռ մեր ականջներին հնչում է Սովետական մեր ազատ աշխարհի ներբողն ու նրա վերջին արձագանքն օրորում է մեզ հպարտության զգացմունքով.

«...Դու ծաղկում ես և կերտում լույս ապագան...»։

***

Այժմ «ԿՐԻԼՅՈՆ»ը ճեղքում է Սև ծովի փրփրոտ ալիքները ու շտապում դեպի հայրենի ծովափ։ Մեծ երազի ճանապարհի վրա մենք առաջ ենք նայում, դեպի հեռավոր ափը, և մեր հայրենավառ նայվածքով ուզում ենք ավելի շուտ ճեղքել հորիզոնը և ժամ առաջ տեսնել ու հասնել մեր երազանքի հանգրվանը։

Մենք ակամա հիշում ենք մեր տխուր երեկը, որ լիքն էր արյունով և արցունքով։ Հիշում ենք հայ ժողովրդի տառապանքը օտար լծի տակ, ջարդերը, հալածանքն ու աքսորը, և բաղդատելով այս երջանիկ շքերթի հետ, մենք զգում ենք, որ իրոք բախտավոր սերունդ ենք մենք։ Ո՞վ կարող էր մտածել և հուսալ, որ հազար անգամ յաթաղանի մահից պրծնելուց հետո, մի օր Հայրենիքը կարող էր ապաստան ընծայել իր հալածական զավակներին և միանգամ ընդմիշտ փրկել նրանց այդ մղձավանջային ապրումներից։ Ու երախտագետ հայացքով նայում ենք շոգենավի կայմի կատարն ալեծփվող կարմիր դրոշակին, որ մի երջանիկ օր փրկեց մեր Հայրենիքն ամեն տեսակի բռնություններից և նրան շնորհեց մշտական խաղաղ կյանք։

Այս գերերջանիկ մտածման մեջ ստեղված, ես հիշում եմ իմ ընկերների ու հարազատների վերջին հանձնարարությունը՝ հանուն բուլղարահայ ժողովրդի համբուրել Սովետական Հայրենիքի նվիրական հողը, համբուրել նաև դարերի կոթող և հայ ժողովրդի գոյության երբեմնի խարիսխ պատմական էջմիածնի կաթողիկոս Գեորգ Զ. Վեհափառ Հայրապետի Սուրբ Աջը, և ողջունել հայ ժողովրդի մեծ բանաստեղծ ու երգիչ Ավետիք Իսահակյանին։

Երբյակ պարտականության այս քաղցր բեռան տակ մտաբույզ, ես հասա երազված հանգրվանը, Բաթումիի նավահանգիստը, իմ Սովետական Հայրենիքի վճիտ ու արևոտ ափը։

Այլևս թոթափած էի ես ընդմիշտ հալածական պանդխտության փոշեթաթախ ցուպը։ Սովետական հողի վրա ես ինձ զգացի ապահով, ուժեղ և հպարտ։ Նոր արյուն և նոր հույզեր ներարկվեցին կարծես իմ երակների մեջ։ Ես թոթափեցի սարսափի, անբաստության և թափառական տարիների դժնդակ բեռը։

Ես երիտասարդացա։

Ու երբ Արարատյան դաշտի սրբազան հողն ես համբուրեցի իմ և բուլղարահայ գաղութի անունից, զգացի մի նոր ուժ և կենսունակություն, որ ո՛չ մի ժամանակ չէի զգացել կյանքում։ Այդ հողի մեջ ես տեսա սովետական բազմազգ ու բազմամիլիոն մարդկանց ուժն ու եղբայրակցությունը և ապահով սերմերը հավերժական խաղաղության։ Այդ հողի վրա ես նոր կյանքով ծընվեցի։

***

Ամառնային մի գեղեցիկ վերջալույսի պահին էր, երբ ես արժանացա Վեհափառ Հայրապետի ունկնդրության, պատմական էջմիածնի կաթողիկոսական Վեհարանի շքեղ դահլիճում։

Տասնվեց դարերն իրենց փառավոր հիշատակներով ինձ էին նայում։ Պարիսպներն ու քարերը, հեռվում մշուշի մեջ թաղված ձյունապատ Արարատը խոսում էին ինձ հետ, իմ սրտի հետ։

Ես սպասում էի Հայրապետին սրտատրոփ, Սփյուռքի հայության ողջույնի ու սիրո զգացմունքներն արդեն որպես խունկ ու կնդրուկ վառելով իմ սրտի բուրվառի մեջ։ Մանկությանս ինչքա՜ն էի երազել՝ լինել գոնե կյանքումս մի անգամ այս պատմական և սրբազան վայրում, լինել նախնիքներիս հիշատակների մթնոլորտում, զգալ ինձ ազատ ու երջանիկ, և լռությամբ հաղորդակցել նրանց հետ։ Եվ ահա՛, Սովետական Հայրենիքը ինձ հնարավորություն է տալիս իրականացնել իմ այդ երազը։

Վեհարանի ձախակողմյան դռան սեմի վրա երևում է Վեհափառ Գեորգ Զ. Հայրապետի պարթև հասակը, և ես, իմ գեղեցիկ և իրականացած երազների աշխարհում երջանիկ, շտապում եմ դիմավորել նրան և կատարել իմ և բուլղարահայ ժողովրդի երկրորդ ցանկությունը։ Ու համբուրում եմ նրա Սուրբ Աջը։

Այն երկու հայրական բարի աչքերը, որոնք ինձ ժպտում են, և այն Աջը, որ հպում է իմ շրթունքներին, ուրախության հուզմունքով են ալեկոծում իմ սիրտը։ Այդ աչքերի և Աջի մեջ եմ նշմարում ես մեր ժողովուրդը անցյալում կանգուն պահող ուժը, և այս պատմական հոգեպարար մթնոլորտի մեջ եմ տեսնում երբեմնի թափառական և անտեր հայ ժողովրդի գոյության հույսը։

Նրա մեղմորեն շարժվող շրթունքներից հոսող իմաստալից բառերը մարգարիտի հատիկների նման են շարահյուսվում։ Նա բացատրում է հատկապես Սփյուռքի հայության կատարած և դեռ կատարելիք դերը էջմիածնի հանդեպ։ Նա շատ գոհ է Սփյուռքի դեպի Սովետական Հայրենիքն ու էջմիածինը ցույց տված հայրենասիրական զգացմունքներից։ Սրբազան Հայրապետը խոսում է դարավոր վանքի ու Տաճարի մասին, Հոգևոր Ճեմարանի աշակերտների, նրանց ուսման և Սովետական Պետության դեպի էջմիածինը ցույց տված հոգատարության մասին, խոսում է սրտաբաց հոր բարձր գիտակցությամբ։ Նա թվում է Սովետական կարգերի անսահման բարիքները դեպի հայ ժողովուրդն ու նրա արժեքները։

Ես նրա մեջ տեսնում եմ ձեռնհաս և բազմաշնորհ Հայրապետին, սովետական գիտակից քաղաքացուն և բարձր մտավորականին։ Մենք խոսում ենք մեր սիրելի Կոմիտասի մասին, որին լավ ճանաչում է Վեհափառը, գնահատում է նրա կատարած մեծ դերը և նրի հետ սրտագրավ հիշատակներ ունի։ Ու ինձ թվում է, թե ես խոսում եմ իմ հարազատ հոր հետ, որին ես շատ վաղ կորցրի մի դրժբախտ օր զուլումի երկրում։

Ու մի ժամ հետո, երբ ես ակամա բաժանվում եմ նրանից, զգում եմ որ հոգիս լցված է անպատում ուրախությամբ։ Դուրս եմ գալիս Վեհարանից պարտականությունը կատարողի գոհունակությամբ, մտքումս դրոշմած նրա կուռ խոսքերի իմաստը, ամբողջովին համակված նրա իսկական հայրենասերի ջերմությամբ։

***

Երևանի Գնունյանց և Ղուկասյան փողոցների քառուղու վրա մի եռահարկ գեղեցիկ շենք կա։ Ես այդ շենքից վեր եմ բարձրանում անսահման հուզմունքով, և սեղմում երրորդ հարկի բնակարանի դրան էլեկտրական կոճակը։

Ինձ դիմավորում է մի ժպտադեմ կին։

Մեծ բանաստեղծի բարեհամբույր կինն էր այդ։

— Վարպետը տա՞նն է,— հարցնում եմ ես ալեկոծյալ ուրախությամբ, ջանալով մեղմել սրտումս կուտակված հուզմունքի ալիքը։

— Այո՛, հրամեցե՛ք,— հրավիրում է տիկինը բարյացակամ ժպիտով, զգալով իմ շփոթությունը։

Դահլիճի կենտրոնում արդեն ինձ դիմավորում է մեծ Բանաստեղծը և սրտագին երկարում իր հայրական ձեռքը։

Ինձ հանձնարարված երրորդ պարտականության մեջ ես ուրախության հուզմունքիցս շփոթում եմ իմ ասելիքները։ ...«Ես Բուլղարիայից եմ ներգաղթած, Վարպե՛տ...» բառերից հետո ես ի՞նչ խոսեցի, չեմ հիշում։ Սակայն, հայ ժողովրդի անցյալ տառապանքն ու այսօրվա երջանիկ ներկան երգող աչեներ, բայց միշտ առույգ ու կենսուրախ ծերունու վճիտ նայվածքի մեջ ես հստակորեն տեսա մեր ժողովուրդն իր պայքարով ու հաղթանակով։ Հայրենասեր մեծ Բանաստեղծի մեջ ես տեսա ստեղծագործ հայ ժողովրդին խաղաղ աշխատանքում և ռազմաճակատներում։ Ու ես մտածեցի.

— Ահա՛ ներկայացուցիչը Սովետական կարգերի շնորհիվ ընդմիշտ ազատագրված Հայաստանի, որի զավակները երեսուն տարվա խաղաղ աշխատանքով ծաղկեցրին իրենց նորազատ Հայրենիքը և Միության ժողովուրդների կուռ շարքերում ջախջախեցին մարդկության թշնամի ֆաշիզմը իր որջի մեջ և ազատեցին աշխարհն ու Սովետական Հայրենիքն այդ ահավոր վտանգից։

Ու մեծ Բանաստեղծը, իր թավ ու հանդարտ ձայնի բովանդակ քաղցրությամբ, խոսում է մեր սոցիալիստական երկրի բարիքների մասին, ժողովուրդների եղբայրակցության և խաղաղության կարոտ հայ ժողովրդի այսօրվա բարելավ վիճակի մասին։ Նա գնահատում է նաև Սփյուռքի հայության հայրենասիրական ջերմ զգացմունքները։ Հիշելով աշխարհավեր պատերազմը, նրա խաղաղ դեմքն ալեկոծվում է. նրա ընթացքում, ինչպես սովետական բոլոր ժողովուրդները, հայ ժողովուրդն ևս բերեց իր զոհաբերության բաժինը, իր արյունով արձանագրեց հերոսական քաջության օրինակներ։

Ես հրաժեշտ եմ տալիս հայ մեծ Բանաստեղծին նրա հայրենասիրական ոգեշնչող խոսքերն ուժգին մտքումս դրոշմած և ուրախ՝ որ կատարել եմ իմ և բուլղարահայ գաղութի ցանկությունը։

***

Այսօր, երբ հայրենի հողի վրա ամուր կանգնած ողջունում եմ նրա Սովետական կարգերի հաստատման երեսնամյա տարեդարձը, ես երախտագիտական զգացմունքներով եմ հիշում չորս տարի առաջվա իմ երջանիկ մուտքը նրա ծաղկուն ու խաղաղ սահմաններից ներս։ Բաղդատում եմ երեկն ու այսօրը. շինարարական ու կուլտուրական անօրինակ վերելքն իր հսկայական թափով իրական դրախտի է վերածել մեր պանծալի Հայրենիքը։

Ու շնորհակալության հույզերով եմ լցվում դեպի ներկան, դեպի Սովետական ազատ կարգերը, որոնք հնարավորություն տվեցին զարգանալու իմ տիրելի, իմ նվիրական Հայրենիքին։